***Կարգապահական գործ թիվ ԿԳ-23024***

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**ՓԱՍՏԱԲԱՆ ՆԵԼԼԻ ՍԼԱՎԻԿԻ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Գուրգեն Թորոսյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Արաքս Վարդանյանի, Միքայել Դանիելյանի, Հայկ Սահակյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Նելլի Մինասյանին **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 2564) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

**Պ Ա Ր Զ Ե Ց՝**

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության պետ՝ Սերգեյ Ատոմյանը (**այսուհետ՝ նաև Դիմող**), դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ նաև Պալատ**), հայտնել է, որ 2023 թվականի ապրիլի 30-ին ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի **(այսուհետ նաև՝ Հիմնարկ)** հերթապահ խմբի պատասխանատու հերթապահ, արդարադատության փոխգնդապետ Շիրազ Զաքարյանը զեկուցագիր է ներկայացրել այն մասին, որ ս/թ ապրիլի 30-ին ժամը 17:50-ի սահմաններում Հիմնարկի 4-րդ տեղամասի թիվ 423 խցում տեղաբաշխված կալանավորված անձ Հարություն Միքայելյանը փաստաբանի հետ տեսակցության ավարտից հետո ենթարկվել է անձնական խուզարկության մետաղորսիչ սարքի միջոցով, որի արդյունքում վերջինիս սպորտային համազգեստի գրպանից հայտնաբերվել է սև գույնի «POCO» գրառմամբ բջջային հեռախոս, մեկ հատ սպիտակ գույնի բջջային հեռախոսի լիցքավորիչ իր լարի հետ միասին, իսկ վերջինիս մոտ գտնվող թղթապանակում հայտնաբերվել է սև գույնի «Redmi» ապրանքանիշի բջջային հեռախոս, մեկ հատ սպիտակ գույնի բջջային

հեռախոսի լիցքավորման համար նախատեսված լար, մեկ հատ «Beeline» գրառմամբ «Wi Fi» սարքավորում և մեկ հատ «Redmi» ապրանքանիշի բջջային հեռախոս՝ պաշտպանիչ թափանցիկ պատյանով:

Դիմողը նաև հավելել է, որ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի 4-րդ տեղամասի թիվ 423 խցում տեղաբաշխված կալանավորված անձ Հարություն Միքայելյանն իր կողմից տրված բացատրությամբ նշել է, որ արգելված իրերն իրեն է փոխանցել փաստաբան Նելլի Մինասյանը:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 03.07.2023 թվականին Դիմողին առաջարկվել է՝ «Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը 14.07.2023թ. ներկայացրել է Հիմնարկի պետի 23.06.2023թ. թիվ 07/23 որոշման, 30.04.2023թ. զեկուցագրի, 30.04.2023թ. կալանավորված անձ Հ. Միքայելյանին զննության ենթարկելու և իր կողմից բանավոր հայտարարության վերաբերյալ արձանագրության, 30.04.2023թ. չնախատեսված խուզարկություն կատարելու մասին արձանագրության, 30.04.2023թ. բացատրություն վերցնելու վերաբերյալ արձանագրության և Հիմնարկի այցելուների մատյանի էջի պատճենները:

**2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունը.</u>**

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Նելլի Սլավիկի Մինասյանին առաջարկվել է՝ Օրենքի 39.3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, ներկայացնել բացատրություն ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության պետ՝ Սերգեյ Ատոմյանի դիմումի վերաբերյալ, սակայն Փաստաբանը դիրքորոշում չի ներկայացրել:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 03.07.2023 թվականին Փաստաբանին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, ինչի կապակցությամբ Փաստաբանը՝ 03.07.2023թ.-ին էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկված նամակով ըստ էության հայտնել է, որ որևէ առնչություն չունի նշվածի հետ, իսկ հետագայում՝ զանգահարելով Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից Հ.Ծատուրյանին, հավելել է, որ դիմումում նկարագրված հանգամանքները իրականությանը չեն համապատասխանում:

**3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

Պալատի նախագահի 05.06.2023թ. թիվ 139-Ա/ԿԳ-23024 որոշմամբ փաստաբան Նելլի Սլավիկի Մինասյանի նկատմամբ Օրենքի **19-րդ հոդվածի 2-րդ կետի**, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք) 6.2.1 ենթակետի** խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

06.06.2023թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Հայկ Ծատուրյանին (**այսուհետ՝ Աշխատակից**):

**3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>**

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

**4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը խորհրդին.</u>**

Սույն կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 04.08.2023թ. կազմել է եզրակացություն:

04.08.2023թ. սույն կարգապահական գործը հանձնվել է Հանձնաժողովին:

Հանձնաժողովի նիստերը տեղի են ունեցել 20.09.2023թ. ժամը 18:30-ին, 26.10.2023թ. ժամը 19:30-ին և 02.11.2023թ. ժամը 19:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

**5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>**

**Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.**

– Փաստաբանը 30.04.2023թ. ժամը 16:50-ի սահմաններում այցելել է Հիմնարկ: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի բացատրությամբ, ինչպես նաև վերջինիս կողմից Հիմնարկի այցելուների մուտքի մատյանում կատարված համապատասխան գրառմամբ:*

– Փաստաբանը 30.04.2023թ. Հիմնարկ այցելություն ընթացքում տեսակցել է կալանավորված անձ Հարություն Միքայելյանին, ով հանդիսանում է իր վստահորդը: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի բացատրությամբ, 30.04.2023թ. բացատրություն վերցնելու մասին արձանագրությամբ, Հիմնարկի պետի 23.06.2023թ. թիվ 07/23 որոշմամբ, ինչպես նաև չի հերքվել Փաստաբանի կողմից:*

– Փաստաբանը կալանավորված անձ Հարություն Միքայելյանին փոխանցել է հետևյալ իրերը՝ *«սև գույնի «POCO» գրառմամբ բջջային հեռախոս, մեկ հատ սպիտակ գույնի բջջային հեռախոսի լիցքավորիչ իր լարի հետ միասին, սև գույնի «Redmi» ապրանքանիշի բջջային հեռախոս, մեկ հատ սպիտակ գույնի բջջային հեռախոսի լիցքավորման համար նախատեսված լար, մեկ հատ «Beeline» գրառմամբ «Wi Fi» սարքավորում և մեկ հատ «Redmi» ապրանքանիշի բջջային հեռախոս՝ պաշտպանիչ թափանցիկ պատյանով»*: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի բացատրությամբ, Հիմնարկի պետի 23.06.2023թ. թիվ 07-/23 որոշմամբ, 30.04.2023թ. զեկուցագրով, 30.04.2023թ. կալանավորված անձ Հ. Միքայելյանին զննության ենթարկելու և իր կողմից բանավոր հայտարարության վերաբերյալ արձանագրությամբ, 30.04.2023թ. բացատրություն վերցնելու վերաբերյալ արձանագրությամբ:*

– ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի պետի 23.06.2023թ.№ 07/23 որոշմամբ Նելլի Սլավիկի Մինասյանի նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 186-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով և նշանակվել է տույժ 150.000 ՀՀ դրամ: Ընդունված վարչական

ակտը վերջինիս կողմից չի բողոքարկվել վերադասության և դատական կարգով, կատարումը չի տարաժամկետվել և չի հետաձգվել, ինչի արդյունքում վարչական իրավախախտման վերաբերյալ վարչական ակտը մտել է ուժի մեջ և դարձել է անբողոքարկելի: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի ներկայացուցչի կողմից ներկայացված վարչական վարույթի նյութերով, ՀՀ Գլխավոր հարկադիր կատարող՝ Արսեն Մնացականյանին ուղղված գրությամբ, Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմի դատական դեպարտամենտի պրակտիկայի վերլուծության և մշտադիտարկման վարչության պետի պաշտոնակատար՝ Վ. Ստեփանյանի գրությամբ:*

**6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>**

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի և տեղեկանքի հավելվածի համաձայն՝ Նելլի Մինասյանը փաստաբան է հանդիսանում 30.04.2019 թվականից և 2019-2023թթ. ընկած ժամանակահատվածում փաստաբանը չունի կարգապահական տույժ:

**7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>**

**Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Նելլի Մինասյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, Կանոնագրքի 6.2.1 ենթակետի պահանջների խախտման համար՝ հետևյալ պատճառաբանությամբ.**

**Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝** *փաստաբանը պարտավոր է՝ պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

**Կանոնագրքի 6.2.1-ին ենթակետի համաձայն՝** *Փաստաբանը պարտավոր է ծերբակալվածներին պահելու վայրերում, կալանավորվածներին պահելու վայրերում, ինչպես նաև ուղղիչ հիմնարկներում՝*

*1) պահպանել սահմանված կարգը.*

*2) իր վստահորդին կամ այլ անձի չփոխանցել արգելված իրեր (առարկաներ):*

**ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝** *Քրեակատարողական հիմնարկներում սահմանվում է ներքին կանոնակարգ, որը նախատեսում է դատապարտյալին քրեակատարողական հիմնարկ ընդունելու կարգը, դատապարտյալի վարքագծի կանոնները,* ***դատապարտյալին արգելված առարկաների և իրերի ցանկը,*** *արգելված առարկաներն առգրավելու, դատապարտյալի և քրեակատարողական հիմնարկում նրա խցի կամ կացարանի խուզարկություն, ինչպես նաև նրա իրերի զննություն կատարելու, տեսակցության, նամակագրության, հանձնուքներն ու ծանրոցները դատապարտյալին փոխանցելու, հեռախոսակապից, այդ թվում՝ տեսազանգից օգտվելու կարգը, օրվա կարգացուցակը և սույն օրենսգրքից, ինչպես նաև իրավական այլ ակտերից բխող այլ հարցեր:*

**Կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» N 543-Ն որոշման (այսուհետ նաև՝ Թիվ 543-Ն որոշում) հավելվածի 74-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝** *Կալանավորված անձին կամ դատապարտյալին արգելվում է՝ ի թիվս այլնի, իր*

*մոտ ունենալ կամ խցում պահել սույն կանոնակարգով արգելված առարկաներ, իրեր և սննդամթերք:*

**Թիվ 543-Ն որոշում 122-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝** *Կալանավորված անձանց և դատապարտյալներին արգելվում է իրենց մոտ ունենալ կամ հանձնուքներով և ծանրոցներով ստանալ կամ ձեռք բերել, ինչպես նաև արգելվում է կալանավորված անձանց և դատապարտյալներին վաճառել՝ ի թիվս այլնի, նաև ցանկացած տեսակի հեռահաղորդակցության կապի միջոց (բջջային հեռախոս, բջջային հեռախոսի լիցքավորման սարք, բաժանորդային քարտ և այլ մասեր ու պարագաներ, ռացիա և այլն)՝ բացառությամբ քրեակատարողական հիմնարկի ցածր անվտանգային գոտու մեղմ պայմաններում պատիժ կրող դատապարտյալների:*

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Վկայակոչված կանոնների վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ վստահորդի իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանությունից բացի, փաստաբանի համար նաև սահմանվում են որոշակի պարտականություններ այդ թվում պետական մարմինների հետ փոխհարաբերություններում, որտեղ փաստաբանն իրականացնում է իր գործունեությունը:

Ավելին, նշված պարտականությունների շրջանակներում առանձնակի նշանակություն ունեն հենց ձերբակալվածներին պահելու, կալանավորվածներին պահելու վայրերում և ուղղիչ հիմնարկներում Փաստաբանի վարքագիծը կարգավորող կանոնները, որոնք իրենց էությամբ բլանկետային են՝ հղում կատարելով այլ իրավական ակտերին, որոնք կարգավորում են այդպիսի հիմնարկներում ծավալվող իրավահարաբերությունները:

Այս համատեքստում, փաստաբանը գործելով ձերբակալվածներին պահելու, կալանավորվածներին պահելու վայրերում և ուղղիչ հիմնարկներում՝ պետք է պահպանի սահմանված կարգը, ինչպես նաև իր վստահորդին չփոխանցի արգելված իրեր (առարկաներ): Իր հերթին ձերբակալվածներին պահելու, կալանավորվածներին պահելու վայրերում և ուղղիչ հիմնարկներում հարաբերությունները կարգավորող իրավական ակտերով սահմանված դրույթների բովանդակությունից ակնհայտ է դառնում, որ փաստաբանը՝ Կանոնագրքի 6.2.1 ենթակետով սահմանված պարտավորության տրամաբանության ներքո, պետք է պահպանի ՀՀ քրեակատարողական օրենսգրքով և Թիվ 543-Ն որոշմամբ սահմանված կանոնները՝ այդ թվում չփոխանցի իր վստահորդին արգելված իրեր (առարկաներ), որոնց շարքին են դասվում ցանկացած տեսակի հեռահաղորդակցության կապի միջոցները:

Տվյալ դեպքում, Հանձնաժողովը ուսումնասիրելով և գնահատելով Դիմողի կողմից ներկայացրած ապացույցները, մասնավորապես՝ Հիմնարկի պետի 23.06.2023թ. թիվ 07-/23 որոշումը, 30.04.2023թ. զեկուցագիրը, կալանավորված անձ Հարություն Միքայելյանին զննության ենթարկելու և իր կողմից բանավոր հայտարարության վերաբերյալ արձանագրությունը, 30.04.2023թ. բացատրություն վերցնելու վերաբերյալ արձանագրությունը, ինչպես նաև գործի այլ նյութերը՝ հաստատված է համարում այն փաստը, որ Փաստաբանը, ունենալով պարտականություն՝ պահպանել

քրեակատարողական հիմնարկի կարգը, խախտել է այն, տրամադրելով իր վստահորդին՝ դատապարտյալ Հարություն Միքայելյանին սև գույնի «POCO» գրառմամբ բջջային հեռախոսը, մեկ հատ սպիտակ գույնի բջջային հեռախոսի լիցքավորիչն իր լարի հետ միասին, սև գույնի «Redmi» ապրանքանիշի բջջային հեռախոսը, մեկ հատ սպիտակ գույնի բջջային հեռախոսի լիցքավորման համար նախատեսված լարը, մեկ հատ «Beeline» գրառմամբ «Wi Fi» սարքավորումը և մեկ հատ «Redmi» ապրանքանիշի բջջային հեռախոսը, որոնք ներառված են Թիվ 543-Ն որոշման 122-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված արգելված իրերի ցանկում:

Հանձնաժողովը հարկ է համարում նաև ընդգծել, որ միևնույն փաստական հանգամանքների վերաբերյալ ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի պետի 23.06.2023թ.№ 07/23 որոշմամբ Նելլի Սլավիկի Մինասյանի նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 186-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով և նշանակվել է տույժ 150.000 ՀՀ դրամ: Նշված վարչական ակտը չի բողոքարկվել, դարձել է անբողոքարկելի և ուղարկվել է հարկադիր կատարման:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի կողմից խախտվել են Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 6.2.1 ենթակետի պահանջները:

**Կարգապահական տույժի ընտրությունը.**

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.

1) նկատողություն.
2) խիստ նկատողություն.
3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.
4) տուգանք.
5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը՝ մասնավորապես այն, որ խախտումն իր բնույթով խաթարում է փաստաբանի

վստահելիությունն ու վնասում է փաստաբանի մասնագիտական վերաբերյալ հանրային ընկալմանը: Հանձնաժողովը հաշվի է առնում նաև Փաստաբանի մեղքի աստիճանը՝ մասնավորապես այն, որ առկա պայմաններում Փաստաբանը պարտավոր էր գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթն ու թույլ չտալ այդպիսի վարքագիծ: Հանձնաժողովը հաշվի է առնում նաև, որ Փաստաբանը կարգապահական տույժ չունի, ինչը բարենպաստ հանգամանք է հանդիսանում: Արդյունքում, Հանձնաժողովը վերոգրյալի համակցված գնահատման արդյունքում Փաստաբանի նկատմամբ որպես հիմնական կարգապահական տույժ կիրառում է «խիստ նկատողություն», ինչպես նաև՝ որպես լրացուցիչ կարգապահական տույժ՝ «Դեոնթոլոգիա» թեմայով, 4 ակադեմիական ժամ ժամաքանակով, «առկա» եղանակով լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն՝ Փաստաբանի հաշվին:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, 7-րդ և 8-րդ մասերի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի, 2-րդ և 3-րդ մասերի պահանջներով, Հանձնաժողովը՝

***Ո Ր Ո Շ Ե Ց՝***

***1. Փաստաբան Նելլի Սլավիկի Մինասյանի (արտոնագիր՝ թիվ 2564) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն, ինչպես նաև լրացուցիչ տույժ՝ լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն իր հաշվին՝ «Դեոնթոլոգիա» թեմայով, 4 ակադեմիական ժամ ժամաքանակով, Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 6.2.1 ենթակետի խախտման համար:***

***2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝սույն որոշման մասին իրազեկել կողմերին:***

***<u>Ծանոթություն.</u>*** *Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:*

**ՀՀ փաստաբանների պալատի**
**կարգապահական հանձնաժողովի**
**նախագահ՝** **Տաթևիկ Շալջյան**

**թիվ ԿԳ-23024-2-Ա**
**02 նոյեմբերի 2023թ.**
**ք. Երևան**